

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/1

18 հոկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Եքիաթ և Հերարմ» ԱԿ 30.09.2013 թ-ի գրությամբ բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՏՏ 26.09.2013 թ-ի թիվ 1009029 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 13.08.2013 թ-ի թիվ 1009029 հանձնարարագրի «Եքիաթ և Հերարմ» ԱԿ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է « ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՏՏ 26.09.2013 թ-ի թիվ 1009029 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 16.860.033 դրամ:

« ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում փաստաթղթեր են ստացվել քաղաքացի «Եքիաթ և Հերարմ» ԱԿ վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ « ԿԱ ՊԵԿ հետաքննության մարմնում նյութեր են նախապատրաստվում «Եքիաթ և Հերարմ» ԱԿ պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Եքիաթ և Հերարմ» ԱԿ 30.09.2013 թ-ի գրությամբ բերված գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Եքիաթ և Հերարմ» ԱԿ 30.09.2013 թ-ի գրությամբ բերված գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ